## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 44

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 06-ի «Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 23-ի N 5-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 20-Ն որոշումը պաշտոնական հրապարակել 2019 թվականի մայիսի 15-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. մայիսի 14
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 46

### «ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ԻՆ ԻՆՔՆԱՀՈՍ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով «ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Գրիգոր Ղարաբաղցյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ին թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող տարածքից 500 մ$^3$ անորակ հող տեղափոխել Պտղնի համայնքի ինքնահոս ոռոգման ջրագծի շինարարական աշխատանքները արդյունավետ կատարելու համար:
2. Հողի բարձման վայրը և տեղափոխման ուղեգիծը հաստատել համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. մայիսի 22
գ.Պտղնի

ՀԱՎԵԼՎԱԾ
Պտղնի համայնքի ղեկավարի
2019 թվականի մայիսի 22-ի
N 46 որոշման



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 47

## ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Անդրանիկ Վարդանի Սարգսյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Անդրանիկ Վարդանի Սարգսյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 3-րդ փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի թիվ 2 հասցեում գտնվող 0.0931 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 31072015-07-0053, ծածկագիր 07-054-0002-0004) նկուղով բնակելի տան և պարիսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Անդրանիկ Վարդանի Սարգսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. մայիսի 23
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 48

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ Գ. ՊՏՂՆԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՂԻՇ ԺՈՐԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ /ԾԱԾԿԱԳԻՐ 07-054-0036-0025/ 0.10254 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Եղիշ Ժորայի Հայրապետյանը դիմել է Պտղնիի համայնքապետարան Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2/1 հասցեում գտնվող 1995-ից 2000 թվականներին կառուցված բնակելի շինությունների, պարիսպի և 0.10254 հա /ծածկագիր 07-054-0036-0025/ տնամերձ հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով, քանի որ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը:

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածների և Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով Եղիշ Ժորայի Հայրապետյանի դիմումը և որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղիշ Ժորայի Հայրապետյանին պատկանող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողամասը և շինությունները կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Եղիշ Ժորայի Հայրապետյանի /ծնված 27.07.1965թ./ սեփականության իրավունքը, գ. Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2/1 հասցեում գտնվող 07-054-0036-0025 կադաստրային ծածկագրով 0.10254 հա փաստացի օգտագործվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի և այդ հողամասի վրա 1995-ից 2000 թվականները կառուցված ըստ նպատակային նշանակության բնակելի շինությունների ըստ գործառնական նշանակության՝ 8.81 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինության, 47.0 քմ արտաքին մակերեսով ջրավազանի և 18.0 քմ մակերեսով պարիսպի նկատմամբ, որոնք նրա կողմից փաստացի օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Եղիշ Ժորայի Հայրապետյանի սեփականության իրավունքը հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. մայիսի 27
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 49

## ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Սուրեն Վահրամի Համբարձումյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Սուրեն Վահրամի Համբարձումյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 1-ին թաղամաս թիվ 30 հասցեում գտնվող 0.095 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 21112018-07-0077, ծածկագիր 07-054-0201-0034) այգետնակի վերակառուցման և ամառային խոհանոցի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Սուրեն Վահրամի Համբարձումյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 03
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 50

### ԷԴՈՒԱՐԴ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Էդուարդ Երվանդի Գասպարյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Էդուարդ Երվանդի Գասպարյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգեգանգված 4-րդ թաղամաս թիվ 7 հասցեում գտնվող 0.05 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 13052019-07-0060, ծածկագիր 07-054-0113-0011) նկուղի և քարե պարիսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Էդուարդ Երվանդի Գասպարյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

X ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 07
գ.Պտղնի